ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑՈՒ «ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ» ԵՐԿԸ

Բանասեր Արմենուհի Սրապյանը ԺԳ.-ԺԴ. դարերի բարունապետ Կիրակոս Երզնկացու կյանքին եւ մատենագրական ժառանգությանը նվիրված հոդվածներից մեկում անդրադառնում է Մաշտոցյան Մատենադարանի մի ձեռագրում պահպանված «Բանք խրատականք»[1] խորագրով ուշագրավ աշխատության՝ նշելով, որ այդ անհեղինակ աշխատության հեղինակը հենց Կիրակոս Երզնկացին է[2]: Ըստ նրա՝ «Նիթն ամբողջութեամբ յագեցած է Կիրակոսի «Ընդհանրականի» ոգով եւ ոճով...: Գործի բանասիրական, գրականագիտական վերլուծութիւնը, որ կատարել ենք մեր անտիպ աշխատութեան մէջ, հաստատում է, որ նրա հեղինակը Կիրակոս Երզնկացին է»[3]: Ցավոք, մեզ չհաջողվեց գտնել բանասերի նշած վերոգրյալ անտիպ աշխատանքը, ուստի ոչինչ չենք կարող ասել նրա բերած փաստարկումների եւ կռվանների մասին: Քանի որ ձեռնամուխ ենք եղել Կիրակոս բարունապետի գրական ողջ ժառանգության ուսումնասիրությանը, ամբողջացմանը եւ տպագրությանը, բնականաբար աչքի անցկացրեցինք այդ ձեռագիրը: Մեզ համար նույնպես ակնհայտ դարձավ, որ այս երկի հեղինակը Կիրակոս Երզնկացին է, երբ համեմատեցինք այն «ՅԱստուծոյ ամենակալէն» սկսվածքով շրջաբերական թղթի[4] եւ «Վասն խոստովանութեան» խորագրով շատ արժեքավոր խրատի հետ[5]: Վերջին երկու գործերի բովանդակությունը, ասպվածաբանական մտածողությունը եւ բառային նմանությունները եւս մեկ անգամ վկայում են, որ «Բանք խրատականք»-ի հեղինակն իր ժամանակաշրջանի նշանավոր եկեղեցականներից մեկն է՝ Կիրակոս բարունապետը:

Աշխատության պատվիրատուն ոմն «եղբայր Յովհանէս» է, որի խնդրանքով Կիրակոս Երզնկացին շարադրել է այս երկը: Ինչպես դիպուկ նկատել է Արմենուհի Սրապյանը, «այստեղ կայ հեղինակի աւելի մտերմիկ շեշտ, անկաշկանդ մօտեցում եւ լեզու, դուռով դիմելու համարձակութիւն եւ իրաւունք: Ինչպէս հետեւում է մէջբերումից, պատուէրը չի տրուել պաշտօնապէս՝ ի վերուստ, այլ մտերմօրէն, խորհրդի ձեւով՝ որպէս հոգեւոր յորդորանք»[6]: Կիրակոս Երզնկացին խրատականի սկզբնամասում այս մասին ասում է. «Եւ զի հարկեցեր զմեզ, սիրելի՛ եղբայր Յովհանէս, առաւել քան զկար մեր՝ ձեռնարկել ի գործ, զոր պարտ էր խնդ[ր]ել ի պատեհագունէ եւ զաւառէ ում մեք, այլ զի մի՛ ի պատիժ անհնազանդութեան անկանիցիմք ըստ իմաստնոյն բանի՝ մատնելով ի կորուստ,

1 Մաշտոցի անվան Մատենադարան (=ՄՄ), ձեռ. ՀՄ 8356, 1322 թ., էջ 176ա-182բ: Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երեւան, 1970, էջ 727:

2 **Արմենուհի Սրապեան**, Կիրակոս Երզնկացի. բանասիրական ճշգրտումներ. «Բազմավէպ», 1993, էջ 187-188:

3 Անդ:

4 «Եզնկացի Կիրակոս վարդապետի թուղթը», «Բազմավէպ», 1943, Յուլիս-Դեկտեմբեր, էջ 62-66:

5 **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու խրատները մեղքերի խոստովանության մասին. «Էջմիածին», 2012, Գ., էջ 74-90:

6 **Արմենուհի Սրապեան**, Կիրակոս Երզնկացի, էջ188:

այլ ճողոպրելով արտաքոյ նորին՝ թերեւս կարասցուք ելանել: Վասն որոյ հարկեցեալ հնազանդեցաք հրամանաց քոց, եւ դու աղաւթեա՛ ի վերայ մեր մտերմաբար»:

Ո՞վ էր այս Հովհաննեսը, որին խրատագիրը «սիրելի» է անվանում եւ չի կարողանում մերժել նրա խնդրանքը՝ հայցելով եւ ակնկալելով միայն նրա աղոթքները: Արմենուհի Սրապյանն այս պատվիրատուին նույնացնում է այն Հովհաննես վարդապետ-բաբունապետի հետ, որի պատվերով Գիրակոս Երզնկացին մեկնել է Ս. Եւագր Պոնտացու «Յաղագս Ը. Խորհրդոցն» եւ «Հարիւրաւորք» աշխատությունները, որը Գիրակոսից մեզ հասած վերջին երկասիրությունն է՝ գրված 1354 թվականին:

Գիրակոսի «Բանք խրատականք» աշխատության պահպանված միակ ձեռագիրն ընդօրինակվել է 1322 թվականին՝ Կարմրիկ[7] անապատում: Թե ե՞րբ է մասնավորապես Գիրակոսն այն հեղինակել, մնում է անհայտ: Եթե ընդունենք, որ ձեռագրի ընդօրինակման եւ գրության թվականները նույնն են, ապա ստացվում է, որ խրատական այս երկը գրվել է Գիրակոսի վերջին աշխատությունից 32 տարի առաջ, երբ պատվիրատու Հովհաննես բաբունապետն ավելի երիտասարդ էր: Բնականաբար, այդ ժամանակ նա կա՛մ պետք է Գիրակոսից տարիքով ավելի մեծ լիներ՝ նման պատվեր տալու համար, կա՛մ էլ՝ նրան տարեկից, որը մեզ ավելի հավանական է թվում: Իսկ ձեռագրի գրության տարում Գիրակոսը շուրջ 47 տարեկան էր՝ հայտնի իր քարոզչական-հովվական գործունեությամբ: Մեր կարծիքով՝ Հովհաննես բաբունապետը Գիրակոս Երզնկացու դասընկերն էր, որին իսկապես եղբոր նման սիրում էր Գիրակոսը: Անկասկած նրանց մտերմությունը սկսվել է շատ վաղուց, որով պետք է բացատրել Հովհաննեսին դիմելու եղբայրական եւ անմիջական ոճը նրա պատվերով գրված աշխատություններում: Մտերմիկ նույն շեշտադրությունը, մտածողությունը եւ բառային նմանությունն ենք տեսնում Գիրակոսի՝ Եւագրի «Հարիւրաւորքի» մեկնության սկզբում, որը ևս մեկ ապացույց է հօգուտ Հովհաննեսի պատվիրատու լինելուն: Ահա թե ինչպես է դիմում «հանապազ ներհուն եւ հանճարեղ բաբունապետ Յովաննէս» պատվիրատուին Գիրակոսը. «Մի անգամ եւ երկիցս *հարկեցեր* եւ սիրով գրաւեցեր առնել լուծումն Ճ. աւորացն սուրբ հաւրն Եւագրեա, որ արդար եւ ձեզ է յարմար այսպիսի գործառնութիւն: Այլ ինձ յոյժ վիշտ վտանգի է յերկուց դիմաց՝ *հրաժարել ի խնդրոյդ եւ զանհնազանդիցն կրել պատուհաս եւ վրիպել ի քաղցր սիրոյ սիրելոյդ* ևս ծանրագոյն զրկումն է: Եւ յանձն առնուլ առաւել դժուարագոյն է եւ ի վեր քան զկար զաւրութեան իմոյ, զի ի փոքր իրողութենէ վրիպել եւ տուգանքն փոքրագոյն է, որպէս եւ յոչ վրիպելն՝ շահն դուզնաքեա»[8]: Այսպիսով՝ պետք է արձանագրել, որ ի դեմս Հովհաննես բաբունապետի՝ ունենք մի պատվիրատու, որի խնդրանքով Գիրակոս Երզնկացին գրել է իր երեք աշխատությունները:

Գիրակոս Երզնկացու «Բանք խրատականք» աշխատությունն առավել հովվական ուղղվածություն եւ նշանակություն ունի: Իբրեւ նախանձախնդիր հոգեւոր հովիվ՝ Գիրակոսը խոսում է Ս. Մկրտության եւ Ս. Պասակի խորհուրդների մասին: Խրատի վերջին

7 Այստեղ է գրվել նաեւ ԺԳ. դարում ընդօրինակված Վիեննն. Մխիթ. մատենադարանի Ձ՚ 261 (հին թիվ՝ 38) ձեռագիրը: Այս տեղանունը Ղեւոնդ Ալիշանը Կամբիկ է ընթերցում. տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Հ. Յակոբոս վ. Տաշեան, Վիեննա, հ. Ա., 1895 էջ 667:

8 ՄՄ ձեռ. Ձ՚ 1980, 1391 թ., էջ 41ա-41բ:

մասում նա խորհուրդներ եւ ցուցումներ է տալիս քահանաներին, թե ինչպե՛ս անցկացնեն խոստովանությունը, որպեսզի խոստովանության եկողները չխուսափեն հոգեւորականից եւ կարողանան իրենց սիրտը բացել եւ անկաշկանդ պատմել գործած մեղքերի մասին: Ինչպես խոստովանության մասին իր մյուս երկերում, այնպես էլ այստեղ շեշտվում է անձնական խոստովանության կարեւորությունը քրիստոնյայի կյանքում: Տարբեր առիթներով խոստովանությանն անդրադառնալը եւ մանրամասն քննարկելն ակնհայտ վկայությունն են խոստովանահայր Կիրակոսի հոգեմտավոր պատրաստվածության մասին: Շատերի համար անձնապես լինելով խոստովանահայր՝ Կիրակոսը քաջատեղյակ է խոստովանության բոլոր մանրամասներին եւ նրբություններին: Նա այն եզակի հեղինակներից է մեր եկեղեցական մատենագրության մեջ, որ իր աշխատություններում խոսում է խոստովանության ձեւի, կատարման կերպի եւ խոստովանազավակ-խոստովանահայր հարաբերության մասին: Նրա նպատակն է մարդուն առավել մոտեցնել Աստծուն եւ աստվածային խորհուրդներին, որպեսզի մեղքերից ազատված՝ ադամորդին կարողանա արժանանալ երկնքի արքայությանը:

Կիրակոսի այս երկն ունի նաեւ ուսուցական-դաստիարակչական նշանակություն, որում երեւում է նաեւ կանոնագիտության տեսանկյունից նրա մոտեցումը եկեղեցու խորհուրդներին եւ գործնական ծիսական արարողություններին: Նրա խրատը եւ հորդորն ուղղված են ոչ միայն խոհուրդը կատարող հոգեւորականին, այլ նաեւ՝ պարզ հավատացյալին:

Շարունակելով հայրախոսական ավանդույթը՝ Կիրակոս Երզնկացին խրատի սկզբում հայտարարում է, որ քրիստոնեության սկիզբը Ս. Մկրտության խորհուրդն է[9], որի մասին քահանան պետք է ուսուցանի իր ժողովրդին: Մկրտության խորհրդակատար քահանան պետք է պատրաստ լինի խորհուրդը կատարելու համար, այսինքն՝ ոչինչ չճաշակած[10], իսկ ծնողներն ու կնքահայրը՝ իրենց մեղքերը խոստովանած: Վերջիններս պահքով եւ աղոթքով Աստծուց պիտի խնդրեն, որ մկրտյալին շնորհներով զարդարի եւ լինի առ Աստված երկյուղով:

Արտահայտելով Հայոց Եկեղեցու տեսակետը կնքահայրության մասին՝ Կիրակոսը եւս մեկ անգամ շեշտում է, որ կինը չի կարող երաշխավոր լինել կնունքի ժամանակ, քանզի այն հոգեւոր ծնունդ է[11]: Անգամ մկրտության ժամանակ կինը չի կարող եկեղեցում գտնվել եւ երաշխավոր լինել երախային:

---

9 Այս պնդման համար Կիրակոսը հավանաբար աչքի առաջ է ունեցել Երզնկայի դպրոցի ռաբունապետ Հովհաննես Երզնկացի Պլուզի († 1293) «Խրատ հասարակաց»-ը, ուր կարդում ենք. «Արդ, քրիստոնէութեան սկիզբն եւ գլուխ մկրտութիւն է». **Է. Մ Բաղդասարյան**, Հովհաննես Երզնկացին եւ նրա խրատական արձակը, 1977, Երեւան, էջ 149:

10 Հմմտ. անդ, էջ 150:

11 Հմմտ. անդ, էջ 151: Ի տարբերություն Լատին եւ Բյուզանդական Եկեղեցիների ավանդության՝ Հայոց Եկեղեցում կնքամոր ինստիտուտ չկա: Այս արգելքի մասին հստակորեն խոսում են մեր եկեղեցու վարդապետները: Օրինակ՝ Ս. Գրիգոր Տաթեւացին (1346-1409) հանրագիտարանային «Գիրք հարցմանց» աշխատության մեջ այս մասին ասում է. «Ոչ կարէ, զի կնքահայր ասեմք եւ ոչ կնքամայր, զի կնքամայր եկեղեցին է նորածնելոցն, որոյ պատճառ է, զի կին երաշխաւոր եւ վկայ ոչ կարէ լինիլ: Եւ դարձեալ՝ կանանց ազգ ոչ կարէ քահանայագործել եւ ոչ կնքահայր լինիլ: Եւ ոչ այս միայն, այլեւ ի ժամ մկրտութեանն ոչ է պարտ մնալ կնոջ յեկեղեցւոջն, զի եւ Տիրամայր Կոյսն ոչ էր ի ժամ մկրտութեանն ընդ Քրիստոսի ի Յորդանան». **Գրիգոր**

Այս աշխատության մեջ Կիրակոս Երզնկացին անդրադառնում է նաև կնքահոր պարտականություններին՝ զորձնական խրատներ տալով նրան: Նա իր սանիկին պետք է խրատի եւ ծնողներին զգուշացնի դաստիարակության համար: Կնքահայրը նաև երախային պետք է եկեղեցի առաջնորդի, նրա բերանով հրաժարել տա սատանայից եւ խոստովանի ուղղափառ դավանությունը[12]: Հետաքրքիր է, որ մկրտությունից հետո Կիրակոսը երեխայի դաստիարակության պարտականությունը դնում է ծնողների վրա եւ ոչինչ չի ասում կնքահոր մասին: Անդրադառնալով իր ժամանակի տարիքային առանձնահատկություններին՝ Կիրակոս բաբունապետը նշում է, որ մինչեւ 15 տարեկան ծնողներն են պատասխան տալիս իրենց զավակի մեղքերի համար, իսկ դրանից հետո՝ երեխան չափահաս է, ուստի ինքն է պատասխանատու իր կատարած քայլերի համար: Այս հատվածում Կիրակոսն ընդգծում է զավակի համար ծնողի կենդանի օրինակ լինելու հանգամանքը՝ արձանագրելով այն պարզ ճշմարտությունը, որ երեխան ինչ տեսնում է իր ծնողներից, այն էլ սովորում է:

15-ամյա տղան արդեն կարող է ամուսնանալ[13]: Կիրակոսը խորհուրդ է տալիս նաև աղջկա ընտրության հարցում. «Պարտ է ծնաւղացն ի ժամ ամուսնութեան մանկանն ոչ զհարուստ ոք խնդրել եւ զմեծազգի առ ի խնամութիւն, այլ զերկիւղածս եւ զաստուածապաշտս, թէ եւ աղքատ իցէ, որոց Աստուած է պաշտպան եւ վերակացու»: Հովհաննես Երզնկացի Պլուզի հետեւողությամբ Կիրակոս Երզնկացին նույնպես դատապարտում է մերձավոր ազգականների միջեւ ամուսնությունները՝ շեշտելով, որ այդ մեղքի պատճառով Աստված առավել է բարկանում աշխարհի վրա[14]: Խնդրին Կիրակոսն անդրադարձել է նաև Եւագրի՝ ութ մեղքերին նվիրված լուծմունքում, որում վկայակոչելով Ովսե մարգարեի գրքի Դ. 1-2 համարները՝ նշում է. «Չի ազգապղծութիւն հանապազ պոռնկութիւն է եւ ոչ ամուսնութիւն եւ աշխարհի աւիրումն»[15]:

Այնուհետեւ Կիրակոս Երզնկացին անդրադառնում է Ս. Պսակի խորհրդի իմաստին՝

Տաթեւացի, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 591: Նույն խնդրի մասին նա իր քարոզներից մեկում ասում է. «Մարդս հոգի է եւ մարմին, եւ ըստ մարմնոյն ունի մարմնաւոր հայր եւ մայր՝ զնոսոնն, եւ ըստ հոգւոյն՝ հոգեւոր մայր զԱռազանն, զհոգեւոր հայր՝ զկնքահայրն,... զի կնքահայր ասեմք եւ ոչ կնքամայր. զի մկրտութեամբն լինիմք որդիք Հօրն երկնաւորի եւ ոչ մօր երկրաւորի». **Գրիգոր Տաթեւացի**, Ամառան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 145-146: Մեզ հանդիպած միակ աղբյուրը, որտեղ խոսվում է մկրտության ժամանակ կնքամոր թույլատրելիության մասին, Եսայի վրդ. Նչեցու (1260-1338) դավանաբանական մի թուղթն է: Նա կարեւոր է համարում ոչ թե սեռերի խնդիրը, այլ կնքահոր ուղղափառ հավատք ունենալը: Չնայած իր վերոբերյալ մտքից քիչ ներքեւ խոսում է միայն կնքահոր մասին: Հավանաբար այստեղ մեծանուն բաբունապետը արձանագրում է տեղային սովորության մասին, որն ընդհանրական բնույթ չի ունեցել. տե՛ս «Թուղթ Եսայեայ վարդապետի առ Տէր Մատթէոս». «Ճռաքաղ» ամսագիր կրօնական, բանասիրական եւ ազգային գիտելեաց, հրատարակեալ ի Մսերայ Մագիստրոսէ Մսերեանց եւ ի Զարմայրայ Մսերեանց, Մոսքուա, 1860, էջ 206:

12 Եսայի վրդ. Նչեցին կնքահոր պարտականությունների մասին ասում է. «Չի կնքահօրն երեք գործ է. խրատող է, որ ուսուցանէ, երաշխաւոր է, որ պահէ, որ ի հեր վատ ընկերի ոչ շրջի, վկայ է, որ քրիստոնեայ է: Երբ զգաստանայ (մանուկն) գիտաչ հանելն ուսուցանէ, երբ յուրք ելնէ՝ զծուլոր ածելն, երբ ի խօսք ելնէ՝ զՀայոց դաւանութիւնն». «Ճռաքաղ», էջ 206:

13 Հովհաննես Երզնկացին որպես տղայի ամուսնության տարիք նշում է 15 տարեկանը, իսկ աղջկա համար՝ 14-ը: Նա որոշ դեպքերում աղջիկների համար թույլատրում է նաեւ 12-ը, իսկ դատապարտելի՝ 10-ը. տե՛ս **Է. Մ Բաղդասարյան**, նշվ. աշխ., էջ 154-155, 115, հմմտ. «Ճռաքաղ», էջ 207:

14 Խնդրի մասին տե՛ս նաեւ. **Է. Մ Բաղդասարյան**, Հովհաննես Երզնկացին եւ նրա խրատական արձակը, էջ 115-116:

15 **Tigran Karapetyan**, Kirakos Erznkacî's on the Eight Thoughts of Evagrius, "*St. Nersess Theological Review*", 2000, V. 5-6, էջ 73:

նշելով. «Ամուսնութիւն ոչ վասն հեշտութեան է եւ ցանկութեան մարմնոյն, այլ վասն որդէծնութեան, որ աճէ մարդ յաշխարհ»: Հետեւաբար առողջ սերունդ ունենալու համար պետք է ամուսնացող զույգը չափահաս լինի եւ կանոնական հասություն ունենա:

Ս. Պսակի կանոնական խնդիրները հուզել եւ մտահոգել են ժամանակաշրջանի այլ գործիչների նույնպես՝ Ս. Ներսես Շնորհալուն († 1173), Հովհաննես Երզնկացի Պլուզին, Եսայի Նչեցուն եւ ուրիշների: Կիրակոսի այս երկում եւս դրանք ունեն կանոնական-խրատական ուղղվածություն եւ բովանդակություն: Հոգեւորականի պարտականությունն է խրատել եւ ճիշտ ուղու վրա դնել իր հոտի անդամներին, ուստի անկախ մարդկանց ցանկություններից կամ տրամադրվածությունից՝ եկեղեցականը պետք է ճշմարտախոս եւ արդարամիտ լինի: Ահա այս դիտանկյունից է խնդրին մոտենում Կիրակոս բաբունապետը՝ զգուշացնելով իր համայնքի անդամներին, որպեսզի իրենց սխալի պատճառով Աստված առավել չբարկանա: Նրա հորդորն է Ս. Պսակի խորհրդին մոտենալ «յանութուց», իսկ քահանան պարտավոր է պսակից հետո Ս. Պատարագ մատուցել եւ խոստովանեցնել, Ս. Հաղորդություն տալ փեսային, փեսայի եղբորը, հարսին եւ հարսնաքրոջը: Նա Պսակից հետո յոթ օր արգելում է զույգին սեռական կապ ունենալ: Երբ ութերորդ օրը քահանան տուն այցելի, փեսայի եւ հարսի գլխից վերցնի պսակները, դրանից հետո միայն նրանք կարող են հարաբերվել: Կիրակոս Երզնկացին նաեւ զգուշացնում է Ս. Պսակի արգելված օրերի համար:

Քահանայի պարտականությունն է նաեւ զգուշացնել, երբ կինը հղի է կամ ամսականի շրջանում, իսկ տղամարդը՝ հարբած կամ հիվանդ եւ այլն, պետք չէ նման դեպքերում ամուսնանալ, որովհետեւ անարժան ամուսնությունից են զանազան արատներով եւ մեղքերով երեխաներ ծնվում: Ինչպես Կիրակոս Երզնկացին է նշում. «Աստուած զծնաւղքն առաւել դատապարտէ, որք այսպիսի չարեացս պատճառ լինին անարժան ամուսնութեամբն եւ բարկացուցանեն զԱստուած եւ աւեր ածեն աշխարհի»:

Կիրակոսն այս երկում խրատում է նաեւ քահանաներին, որպեսզի իրենք նախ օրինակ լինեն մյուսների համար եւ ոչ թե գայթակղության առիթ. կանոնավոր Ս. Պատարագներ մատուցեն, խոստովանեցնեն մարդկանց եւ Ս. Հաղորդություն բաշխեն: Բայց նրա պատգամն ուղղված է ոչ միայն եկեղեցականին, այլեւ աշխարհականին: «Զի քրիստոնէ, որ կիրակէ Աւետարանի ձայն չլսէ, չէ՛ քրիստոնէ: Այլ եւ կին եւ տղայքն եւս կիրակէն անաւթի կենան մինչեւ պատարագն եւ ճաշոյ ժամն արձակի, եւ ապա ճաշակել կերակուր, որչափ եւ հնար է, կիրակէն զվաճառն խափանել եւ ի քաղաք չգնալ, այլ յեկեղեցի եւ յաղաւթս, ի խոստովանութիւն եւ ի հաղորդութիւն: Զի քրիստոնէին պարտ է, որ յամէն կիրակէ խոստովանի եւ յամէն Խ. աւր հաղորդի[16]: Եւ ահիւ եւ երկիւղիւ կայցեն ի պատուիրան Աստուծոյ, զի աստ ի խաղաղութեան կացցեն, եւ անդ զերկնից արքայութիւն ժառանգեսցեն միշտ»,- գրում է Կիրակոս բաբունապետը:

Շարունակելով քահանաներին ուղղված իր հորդորները՝ Կիրակոս բաբունապետը խորհուրդ է տալիս հատկապես զգույշ լինել խոստովանության հարցում՝ բերելով հե-

16 **Է. Մ Բաղդասարյան**, Հովհաննես Երզնկացին եւ նրա խրատական արձակը, էջ 175, հմմտ. «Ճռաքաղ», էջ 207, «Բազմավէպ», 1943, էջ 64:

տեւյալ համեմատությունը. «Զի յայլ ամենայն քահանայգործութիւնս զսուրբ եւ զերկիւղած քահանայ պարտ է ընտրել, թէ եւ տգէտ իցէ, իսկ խոստովանութիւնն լաւ է մեղաւոր եւ գիտուն, քան զսուրբ եւ տգէտ, զի բազում ինչ գայթագղեցուցանէ տգէտ քահանայն զխոստովանաւղն ի ժամ խոստովանութեանն»: Զուգահեռ անցկացնելով խոստովանահոր՝ հոգեւոր բժշկի եւ սովորական բժշկի միջեւ՝ նա հորդորում է փախչել տգետ խոստովանահորից՝ հուսահատության կամ անհարմարության մեջ չընկնելու համար[17]: Քահանաների պարտականությունն է մարդկանց տեղեկացնել, որ խոստովանության համար խոստովանադրամ չկա[18]: Նրանք պետք է հորդորեն մարդկանց՝ ազատորեն խոստովանության գալու եւ հատկապես կիրակի օրերին, երբ Ս. Պատարագ է մատուցվում: Խրատող եւ քաջ հովվի նման իր հոտը հովվող քահանային Աստված բազում շնորհներ է տալիս, իսկ անփույթի դեպքում Աստված ինքն է դատավորը: Քահանան պետք է տեսնի իր մոտ եկած մարդու զղջումը, նրա տարիքը, որտեղից լինելը, հոգեւոր առումով կիրթ կամ տգետ լինելը, որից հետո միայն որոշի տվյալ մարդու ապաշխարության չափը:

Կիրակոս Երզնկացին այն եզակի հոգեւորականներից է, որ իր աշխատություններում նկարագրում է, թե ինչպես էր իր ժամանակ կատարվում խոստովանությունը: Քահանայի մոտ խոստովանության եկողը երեք անգամ ծնրադրում էր եւ ասում աղոթական հետեւյալ խոսքերը, որոնք Կիրակոսը մեջբերել է նաեւ «Վասն խոստովանութեան» խորագրով իր երկում[19]: Ներքոգրյալ համեմատությունը ցույց է տալիս, որ երկու երկերը նույն հեղինակի գրչի արդյունքն են:

Այս աղոթքին հաջորդում է ուղղափառ դավանության խոստովանությունը, որն ասում է խոստովանողը՝ շարունակելով մեղաների շարքը:

Կիրակոս Երզնկացու նկարագրած խոստովանության կերպը տարբերվում է մեզ հասած մյուս բնագրերի նկարագրություններից: Այսպես՝ այս մասին հայերենով պահ-

ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ	ԽՐԱՏ ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ
Յորժամ եկեսցէ ոք առաջի քա[հա]նայի, նախ երիս ծունր հրամայէ խոստովանահայրն կրկնել խոստովանողին առաջի Աստուծոյ եւ ասել. «Գոհանա՛մ զՔէն, Տէր Աստուած, որ արժանի արարեր զիս՝ գալ ի խոստովանութիւն: Եւ արդ, Տէ՛ր, տո՛ւր ինձ ըստ Քո հաճոյիցդ խոստովանել զմեղս իմ առանց ամաւթոյ, եւ հալածեա՛ զինէն զսատանայ, զի մի՛ մոռացուցս ար[ասցէ] մեղաց իմոց, եւ զբուսումն եւ ցնոր, եւ չար ամաւթ արկցէ ի սիրտս իմ եւ չտայ ճշմարտութեամբ խոստովանել»:	*Եւ յորժամ երթայ առ խոստովանահայրն, յառաջն Գ. ծունր դնէ յանուն Սուրբ Երրորդութեանն եւ ասէ զաղաւթս զայս: Գոհանա՛մ զՔէն, Տէր Աստուած իմ, որ արժանի արարեր զիս՝ գալ ի խոստովանութիւն: Եւ արդ, տո՛ւր ինձ Տէր՝ ըստ հաճոյից Քոց խոստովանել զմեղս իմ առանց ամաւթոյ, եւ հալածեա՛ զինէն զսատանայ, զի մի՛ մոռացումն արասցէ մեղաց իմոց, եւ զբաղումն եւ զչար ամաւթ արկցէ ի վերայ իմ, եւ ոչ տայ ինձ ճշմարտութեամբ խոստովանել զմեղս իմ:*

17 Հովհաննես Պլուզը քահանայի եւ բժշկի համար ասում է. «Արդ, ողորմեցէ՛ք ձեզ, ո՛վ քրիստոնէք, եւ մի՛ կայք ի մէջ մեղաց, զի մեղատրն որպէս հիւանդ է: Թէ հիւանդն ծածկէ զիւր ցաւն եւ չգայ ի խոստ եւ չասէ բժշկին, չգտանէ դեղ հիւանդութեան: Նոյնպէս քահանայն բժիշկ է հոգոց. ով ծածկէ զիւր մեղքն եւ չխոստովանի՝ մեռանի զմահն հաւիրենից». **Է. Մ Բաղդասարյան**, անդ, էջ 174: Նույն խնդրի մասին Ս. Գրիգոր Տաթեւացին ասում է. «Խոստովանահայրն, որ է հոգեւոր բժիշկ, պարտ է գիտուն լինիլ եւ պատրաստ ձեռնարկել ի խոստովանութեան լսելն, եւ թէ ոչ՝ բազումս սպանանէ: Զի յորժամ ոչ կարէ ճանաչել զզանազան մեղս եւ ոչ կարէ զդեղ նորա գտանել, եւ թէ դեղ դնէ, ոչ զառողջարարն դնէ». «Ամառան հատոր», էջ 189:

18 Հմմտ. **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացին մեղքերի մասին. «Էջմիածին», 2013, Ա., էջ 61, «Ամառան հատոր», էջ 190:

19 Տե՛ս **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու խրատները մեղքերի խոստովանության մասին, էջ 75:

պանված ամենահին երկը, որում նկարագրված է խոստովանության կատարման կարգը եւ ձեւը, Ս. Հովհան Մանդակունուն (478-490) վերագրված եւ «Կանոնագիրք հայոց»-ում զետեղված «Կոչումն ապաշխարութեան» գրվածքն է: Ըստ Կանոնագրքի աշխատասիրող Վազգեն Հակոբյանի՝ Մանդակունու կանոնախմբերը չեն մտել Կանոնագրքի Ը. եւ Ժ. դարերի խմբագրությունների մեջ, դրանք հանդես են գալիս միայն ԺԱ. դարի խմբագրությունում[20]: Այս երկում մեզ հուզող հարցի մասին հետեւյալն է ասվում. «Եւ ապա կացուցանէ զիոստովանողն հանդէպ դրանն եւ թուէ զանուանս մեղացն»[21]: Այստեղից պարզ է դառնում, որ խոստովանությունը կատարվել է ոտքի կանգնած, ինչպես որ տեսնում ենք այսօր բյուզանդական եկեղեցիներում[22]: Թե այս կերպը մինչեւ ե՞րբ է կատարվել մեր եկեղեցում, դժվարանում ենք ասել՝ հիմնարար փաստեր չունենալու պատճառով: Այս դեպքում Կիրակոս Երզնկացու նկարագրություններն իրոք արժեքավոր են, քանզի առավել ստույգ են ժամանակագրական առումով: Նույն կերպին ենք հանդիպում նաեւ Կոստանդին Բարձրբերդցի Կաթողիկոսի (1221-1267) 1251 թ. Արեւելյան Հայաստանի հայերին ուղղված խրատական թղթում[23]: Իսկ Գրիգոր Տաթեւացին իր քարոզներից մեկում այսպես է նկարագրում խոստովանության ձեւը. «Զի խոստովանահայրն նստեալ՝ զդէմս Քրիստոսի ունի նստեալ յաթոռ դատողութեան, եւ որ խոստովանի, նստի ի ձախակողմն Քրիստոսի, եւ զգլուխն խոնարհեցուցեալ, եւ զաչսն խփեալ, եւ զձեռն կցեալ՝ խոստովանի»[24]:

Կիրակոս Երզնկացու «Բանք խրատականք» երկի կարեւոր արժանիքներից է, որ հեղինակը գործնական խորհուրդներ է տալիս քահանային խոստովանության համար: Նպատակը մեկն է՝ օգնել մարդուն անկաշկանդ ասելու իր մեղքերը քահանային: Ահա հոգեւոր այս գիտակցությամբ է նա խորհուրդ տալիս քահանաներին. «Եւ ապա տացէ համարձակութիւն ասել, զոր ինչ գործեալ իցէ՝ յորդորելով, թէ մի՛ ամաչեր, զի ես մարդ եմ ընդ մեղաւք անկեալ, եւ թէ, զոր ասէ ամաչես եւ յինէն թագուցանես, յահեղ հրապարակն առաջի երկնաւորացն եւ երկրաւորաց զգլուխ *դ* բանաս ու կանչես լալով եւ չգտանես թողութիւն: Վասն որոյ ասա՛ իմ առաջ ի միայնոյ, եւ ես դիւրաւ առնեմ թողութիւն: Եւ ապա փոքր մի ներումն պարտ է տալ, զի ինքն յինքենէ շարժեսցի եւ ասէ որչափ կարէ: Եւ դարձեալ կրկնեալ ասէ, թէ այլ ասա՛ եւ երիցս եւ չորիցս միջոց տալ եւ հետ նեղել, թէ ասա՛. մի՛ վախեր, մի՛ ամաչեր, չդնե՛մ ծանր լուծ: Դիւրաւ առնեմ թողութիւն, լո՛ւր միայն, ասա՛, մի՛ պահեր յինէն: Եւ յորժամ դադարէ ասելով, թէ այլ ոչ ինչ գիտեմ, ապա քննել պարտ է, թէ զայս ինչ եւ զայս գործեալ իցես, որ մոռացեալ իցէ, ի վերայ հասցէ եւ թէ վախէ կամ ամա-

20 Մանրամասն տե՛ս «Կանոնագիրք հայոց», հ. Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երեւան, 1971, էջ 393-394, ինչպես նաեւ՝ **Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրաւունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 396:

21 Անդ, էջ 297:

22 Մանրամասն տե՛ս **А. Алмазов**, *Тайная исповедь в Православной Восточной Церквы*, Одесса, 1894, էջ 66-201:

23 Տե՛ս **Լեւոն Խաչիկեան**, Աշխատութիւններ, հ. Ա., Երեւան, 1995, էջ 171:

24 **Գրիգոր Տաթեւացի**, Ճոնաան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 321:

չէ, համարձակութիւն առցէ ի հարցմանէն եւ ասէ՝ այո՛»[25]: Ապա Կիրակոսը խորհուրդ է տալիս քննելու մեղքը գործելու ժամանակը եւ մյուս հանգամանքները:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ Կիրակոս վրդ. Երզնկացու գործնական ծիսագիտությանը նվիրված խրատական, ուսուցական եւ դաստիարակչական այս աշխատությունն իր տեսակով եզակի գործերից է հայ մատենագրության մեջ, որը հնարավորություն է ընձեռում մեզ՝ պատկերացում կազմելու տվյալ ժամանակաշրջանի եկեղեցու ծիսական կյանքի եւ եկեղեցականի հոգեւոր փորձառության մասին:

Բնագիրը հրապարակում ենք աննշան միջամտությամբ. մի քանի դեպքում վերականգնել ենք բառավերջի չգրված յ-երը (չկայ) եւ զանց առել յ-ի անտեղի գործածությունները (այդ), երկգրությունները եւ ուղղագրությունը թողել ենք նույնը՝ ձեռագրական պատկերը ցույց տալու համար, քանզի աշխատությունը մեզ է հասել ձեռագիր մեկ ընդօրինակությամբ: Կիրակոս Երզնկացու «Բանք խրատականք» երկը հրատարակվում է առաջին անգամ: Ստորեւ տալիս ենք ձեռագրի նկարագրությունը:

ՄՄ ձեռ. ՀՄ 8356, Ժողովածու, էջ 176ա-182բ, 1322 թ., Կարմրիկ անապատ: Գրիչ, սրացող՝ Ստեփանոս դպիր, թերթ՝ 230, թուղթ՝ 18,2x12,6, միասյուն, բոլորգիր, տող՝ 21:

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆ

25 Նման մանրամասնության ենք հանդիպում Լատին Եկեղեցու նշանավոր վարդապետ Թովմա Աքվինացու (1225-1274) մի երկում. տե՛ս «Խոստովանարան Սրբոյն Թովմայի Աքուինացւոյն», Վենետիկ, 1727, էջ 7-134:

ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ

«Ամենայն, որ խնդրէ ի քէն, տո՛ւր»,- ասէ տէրունական հրամանն (Ղուկ. Զ. 30): Եւ զի հարկեցեր զմեզ, սիրելի՛ եղբայր Յովհանէս, առաւել քան զկար մեր՝ ձեռնարկել ի գործ, զոր պարտ էր խնդ[ր]ել ի պատեհագունէ եւ զաւրաւորէ ումմեքէ, այլ զի մի՛ ի պատիժ անհնազանդութեան անկանիցիմք ըստ իմաստնոյն բանի մատնելով ի կորուստ, այլ ճողոպրելով արտաքոյ նորին՝ թերեւս կարասցուք ելանել: Վասն որոյ հարկեցեալ հնազանդեցաք հրամանաց քոց, եւ դու աղաւթեա՛ ի վերայ մեր մտերմաբար:

Սկիզբն քրիստոնէութեան հաւատոյն մկրտութիւնն է, զոր պարտ է քահանային ուսուցանել ժողովրդեանն: Նախ եւ առաջին, զի յանութուց լիցի եւ ոչ կերած եւ խմած, եւ զի ծնաւղքն եւ կնքահայրն խոստովանած լիցին եւ աղաւ/176բ/թիւք եւ պահաւք խնդրեն յԱստուծոյ, որ Աստուած շնոր[հ]ք բարի տայ տղային ի մկրտութեանն, զի բարեսէր լիցի եւ երկիւղած յԱստուծոյ մանուկն:

Կին մարդոյ սան ոչ տալ, եւ ի ժամ մկրտութեանն կին մարդ յեկեղեցին բնաւ ոչ թողուլ՝ ո՛չ զդայեակն եւ ո՛չ զայլ ոք, մինչեւ մկրտի մանունկն, զի հոգեւոր է ծնունդն:

Եւ գիտել պարտ է, թէ սանահայր լինելն երաշխաւորութիւն է: Պարտի սանահայրն խնամ տանել մանկանն, եւ պահել եւ յամէն ժամ քննել վասն բարի կալոյ մանկանն եւ զծնաւղսն առաւել զգուշացնել վասն դաստիարակութեան, մինչեւ յարբունս հասանէ մանուկն եւ խաւսել կարիցէ: Եւ ապա, կալեալ սանահայրն զձեռանէ մանկանն, եւ տարցէ ի դուռն եկեղեցւոյն առաջի քահանայից եւ աշխարհականաց, եւ առաջի նոցա տայ հրաժարել մանկանն իւրով բերանովն ի սատանայէ եւ հաւատալ յԱմենասուրբ Երրորդութիւնն: Եւ յայնմ աւ/177ա/րէ ելաւ սանահայրն յերաշխաւորութենէ, եւ յայնմհետէ պարտին ծնաւղքն ուսուցանել զերկիւղն Աստուծոյ մանկանն՝ յորդորելով ի պահս եւ յաղաւթս, ի խոստովանութիւն եւ ի հաղորդութիւն: Մինչեւ ի ԺԵ. ամն ծնաւղքն են պարտական մանկանն մեղացն, զի զինչ որ տեսանէ մանուկն ի ծնաւղացն, զայն ուսանի: Վասն որոյ պարտ է ծնաւղացն բարեգործ լինել եւ զմանուկն ի նոյնն խրատել: Եւ ԺԵ. ամէն ի վեր զինչ որ գործէ մանուկն, ինքն է իւր մեղացն պարտական, զի ի չափ հասեալ է, եւ ժամ է ամուսնութեան: Վասն որոյ պարտ է ծնաւղացն ի ժամ ամուսնութեան մանկանն ոչ զհարուստ ոք խնդրել եւ զմեծազգի առ ի խնամութիւն, այլ զերկիւղածս եւ զաստուածապաշտս, թէ եւ աղքատ իցէ, որոց Աստուած է պաշտպան եւ վերակացու: Եւ ի ժամ ամուսնութեան առաւել զգու-

չանալ պարտ է, զի մի՛ ազգականք լինին ամուսնացեալքն, զի վասն ազգապղծութեան առաւել /177բ/ բարկանայ Աստուած ի վերայ աշխարհի:

Եւ զպսակն եւս յանաւթուց պարտ է առնել, եւ քահանայն յետ պսակին պատարագ մատուցանէ, եւ զփեսայն, եւ զփեսաղբայրն, եւ հարսն, եւ զհարսնաքոյրն խոստովանեցնեն եւ հաղորդել: Եւ մինչեւ յեւթն աւրն հարսն եւ փեսայն մի՛ իշխեսցեն ննջել ի միասին, այլ ի զատ պահեսցեն, մինչեւ յեւթն աւրն: Եւ ապա յետ եւթն աւուրն կոչեսցեն զքահանայն եւ եկեալ առցէ զպսակսն ի գլխոց փեսային եւ հարսինն, եւ խաչ հանէ ի վերայ նոցա, եւ տայ հրաման մերձաւորութեան եւ ուսու[ս]ցէ, զի որչափ զբերանն ի պաք պահէ եւ յամուսնութենէ պարտ է պահել: Նա եւ յաւուրս տաւնից ի շաբաթ եւ ի կիրակէ, զաղուհացսն եւ զյինունքն, զուրբաթ, եւ զչորեքշաբաթ, եւ զշաբաթապա[հ]ք չէ պարտ ամուսնանալ:

Այլ եւ զայս եւս պարտ է ծանուցանել եւ քարոզել քահանային, զի որչափ կինն յղի իցէ կամ ապարհ իցէ, կամ այր արբած իցէ, կամ հիւանդք եւ ցաւոտք իցեն եւ կամ սրտեալծ եւ կռուածք իցեն, չէ պարտ /178ա/ ամուսնանալ, զի յայսպիսի անարժան ամուսնութենէն լինին տղայքն դիւահարք, գոդիք, պիսկոտք եւ ցաւոտք, խեղ եւ ծուռ եւ մատնին ի գերութիւն եւ լինին մեղսասէրք, արբեցաւղք, շնացաւղք, մատնաւղք, յիշնատուք եւ չարագործք, գողք, անիրաւք, խլաւղք, զրկաւղք, յիշոցնատուք, ստախաւսք, ստերդմունք, ուրացաւղք, ծոյլք, հեղք, բարեատեացք: Եւ այլ ամենայն չարք վասն անարժան ամուսնութեան լինին: Եւ Աստուած զծնաւղքն առաւել դատապարտէ, որք այսպիսի չարեացս պատճառ լինին անարժան ամուսնութեամբն եւ բարկացուցանեն զԱստուած եւ աւեր ածեն աշխարհի:

Նա եւ զայն եւս գիտել պարտ է, զի ամուսնութիւն ոչ վասն հեշտութեան է եւ ցանկութեան մարմնոյն, այլ վասն որդէծնութեան, որ աճէ մարդ յաշխարհ: Վասն որոյ պարտ է, զի սահմանով լիցի, զի մի՛ դատապարտեսցին, զի անարժան ամուսնութիւն շնութիւն է եւ ոչ ամուսնութիւն: Եւ յորժամ մարդ զչափն ելանէ յամուսնութիւն, քան զանա/178բ/սուն, եւ զգազան, եւ զսողուն, եւ քան զշուն, եւ զգորտն, եւ զմուկն, եւ զաւճ, եւ քան զամենայն զազրելի կենդանիս, այլ վատթար եւ պիղծ լիցի, զի նոքա զիւրեանց սահման եւ զչափ գիտեն զխառնակութեան: Եւ մարդն ոչ գիտ[է], երբ անառակի, եւ սովք, եւ սրածութիւնք, եւ երաշտութիւնք եւ այլ ամենայն ցասումն, որ գայ ի վերայ աշխարհի, վասն անարժան ամուսնութեան լինի: Վասն որոյ պարտ է զգուշանալ եւ երկնչել յԱստուծոյ, զի մի՛ դատեսցին: Զայս ամենայն եւ զսոցին նմանս պարտ է քահանային ուսուցանել ժողովրդեանն եւ առաւել նորափեսայիցն եւ հարսանցն, զի զգասցին եւ ծանիցեն զկարգն իւրեանց՝ զսահման, եւ զչափ, եւ զարժան:

Եւ քահանայիցն առաւել զգուշանալ պարտ է, զի աւրինակ բարեաց լիցին եւ մի՛ գայթագղութիւն ժողովրդեանն՝ յամենայն շաբաթ եւ կիրակէ պատարագ մատուցանել եւ զհաղորդն փոխել, եւ զժողովուրդն յորդորել գալ ի խոստովանութիւն եւ ի հաղորդութիւն եւ ունկնդիր լինել պատուիրանաց Աստուծոյ: /179ա/ Զի քրիստոնէ, որ կիրակէ Աւետարանի ձայն չլսէ, չէ՛ քրիստոնէ: Այլ եւ կին եւ տղայքն եւս կիրակէն անաւթի կենան մինչեւ պատարագն եւ ճաշոյ ժամն արձակի, եւ ապա ճաշակել կերակուր, որչափ եւ հնար է, կիրակէն զվաճառն խափանել եւ ի քաղաք չգնալ, այլ յեկեղեցի եւ յաղաւթս, ի խոստովանութիւն եւ ի հաղորդութիւն: Զի քրիստոնէին պարտ է, որ յամէն կիրակէ խոստովանի եւ յամէն Խ. աւր հաղորդի: Եւ ահիւ եւ երկիւղիւ կայցեն ի պատուիրան Աստուծոյ, զի աստ ի խաղաղութեան կացցեն, եւ անդ զերկնից արքայութիւն ժառանգեսցեն միշտ:

Այլ վասն խոստովանութեան առաւել պարտ է զգուշանալ քահանայից եւ բազում հոգ յանձն ունել, զի մի՛ տգիտութեամբ կորիցեն երկոքին կողմանքն: Զի յայլ ամենայն քահանայգործութիւնս զսուրբ եւ զերկիւղած քահանայ պարտ է ընտրել, թէ եւ տգէտ իցէ, իսկ խոստովանութիւնն լաւ է մեղաւոր եւ գիտուն, քան զսուրբ եւ տգէտ, զի բազում ինչ գայթագղեցուցանէ տգէտ քահանայն զխոստովանաւղն ի ժամ խոստովանութեանն: /179բ/ Է զոր ճշդիւ խղդէ, եւ է, զոր թուլութեամբ կորուսանէ:

Նա եւ յանպատշաճ հարցուածն մեղք ուսուցանէ եւ ի լռելն եւ յանփոյթ առնելն կորուսանէ. երբեմն յուսահատութեամբ ընկղմէ եւ այլ երբեմն՝ անյարմարութեամբ: Համարձակութիւն տայ ի մեղս եւ թեթեւացնէ առ զղջացեալն զմեղացն ծանրութիւնն: Եւ այսպիսիք յոլովք լինին անընտրութիւնք ի տգէտ բժշկաց, յորոց ձեռն փոխանակ բժշկելոյ խոցեալք եւ վիրեալք լինին բազում անգամ, որք գան առ այնպիսիսն ի խոստովանութիւն: Վասն որոյ առաւել զգուշանալ պարտ է, զի մի՛ զանձն եւ զընկերն կորուսանէ եւ յԱստուծոյ դատապարտի: Զի որպէս ի սրոյ, պարտ է փախչել ի տգէտ խոստովանեցնելոյ տգէտ քահանային եւ ոչ փառասիրութեամբ եւ ագահութեամբ ի վերայ վազել եւ յաւժարել ի խոստովանեցնելն:

Եւ գիտել պարտ է, զի խոստովանագրամ առնուլ մեծ եւ ծանր մեղք է, զոր ոչ կարեմ զանուն ասել, զի մի՛ տրտմեցուցից զձեզ, այլ զգուշացի՛ք, զի մի՛ առնուցուք, զի բազու/180ա/մք վասն ամաւթոյ դատարկաձեռնութեան զրկին ի խոստովանութենէ: Վասն որոյ բազում անգամ պարտ է ասել քա[հա]նայից, թէ բնաւ չկա՛յ խոստովանագրամ, եկէ՛ք համարձակ ի խոստովանութիւն եւս առաւել յաւուր կիրակէի, զի կիւրակէ ի բանն վասն այն է խափանած, զի քրիստոնէն զամենայն հոգ ի բաց ընկենու յաւուր կիւրակէի: Եւ արք եւ կանայք

հանդերձ մանկամբք սիրով եւ յուժարութեամբ դիմեն յեկեղեցին, յաղաւթք, եւ ի զղջումն, եւ ի խոստովանութիւն, եւ յունկնդրութիւն Գրոց Սրբոց եւ ի հաղորդութիւն մարմնոյ եւ արեան Տեառն:

Եւ ասել պարտ է յամենայն ժամ քահանայից եւ ոչ ձանձրանալ, զի հովիւ է քահանայն հաւատին Քրիստոսի, եւ թէ անփոյթ առնէ եւ ոչ կոչէ եւ խրատէ, զարիւնն ժողովրդեան ի քահանայէն խնդրէ Աստուած, եւ զքահանայն ընդ անհաւատսն դասէ վասն իւր հեղգութեանն եւ անփոյթ առնելոյն: Իսկ որք բարիոք հովուեն, մեծ վարձս պարգեւէ Աստուած այնպիսեացն եւ առաւել աճեցուցանէ: Եւ յորժամ գայցէ ոք ի խոստովանութիւն, նախ հայել պարտ է քահանային /180բ/ ի զղջումն մարդոյն, յահն եւ յամաւթն, եւ ի դիմացն եւ ի բանից ճանաչել զերկիւղն եւ յայն, որ ի վերայ զապաշխարութիւնն սահմանել[1]: Այլ եւ նայել պարտ է, թէ ծե՞ր է, տղա՞յ է, երիտասա՞րդ է, վայրաբնա՞կ է, քաղաքացի՞ է, թէ՞ ռամիկ է, թէ՞ լիրբ է, թէ՞ ամաւթխած է, ծանա՞ւթ է պատուիրանաց Տեառն, թէ՞ տգէտ է աւրինացն Աստուծոյ, պարզամի՞տ է, թէ՞ խորամանկ է, արհամարհանա՞ւք է յաւրէնս Տեառն, թէ՞ տգիտութեամբ ի նոյնն բերի: Զի յիւր բնութեանն եւ ի գնացիցն ի վերայ պարտ է զինքն սահմանել, որ կարէ տանել, զի զոմանց զմեղքն պարտ է ձրի թողուլ, եւ ոմանց ընդ փոքր մեղացն ծանր ապաշխարութիւն դնել, եւ կիսոցն ընդ մեծ մեղացն[2] թեթեւ, որպէս ճանաչէ զմար[դ]ոյն կերպն եւ զգնացքն:

Եւ յեղանակ խոստովանութեանն այսպէս լիցի: Յորժամ եկեսցէ ոք առաջի քա[հա]նայի, նախ երիս ծունր հրամայէ խոստովանահայրն կրկնել խոստովանողին առաջի Աստուծոյ եւ ասել. «Գոհանա՛մ զՔէն, Տէ՛ր Աստուած, որ արժանի արարեր զիս՝ /181ա/ գալ ի խոստովանութիւն: Եւ արդ, Տէ՛ր, տո՛ւր ինձ ըստ Քո հաճոյիցդ խոստովանել զմեղս իմ առանց ամաւթոյ, եւ հալածեա՛ յինէն զսատանայ, զի մի՛ մոռացուցես ար[աս]ցէ մեղաց իմոց, եւ զբուսումն եւ ցնոր, եւ չար ամաւթ արկցէ ի սիրտս իմ եւ չտայ ճշմարտութեամբ խոստովանել: Այլ հերքեա՛ յինէն, Տէ՛ր, զչարին խորհրդակցութիւն, զի յուսով եւ երկիւղիւ բացից զբերանս իմ եւ ասացից զմեղս իմ առաջի Քո մեծաւ հաւատով, եւ ընկալայց ի Քէն տիրապէս զթողութիւն, զշնորհս եւ զողորմութիւնս առատապէս»: Եւ ահա հրաման տայցէ նստել: Եւ թէ այր մարդ իցէ, զգլուխն բանալ պարտ է եւ զծունկն ի գետինն արկանել եւ ասել. «Հաւատամ ի Հայր, եւ ի յՈրդի, եւ ի Հոգին Սուրբ»: Եւ ապա ասասցէ. «Մեղայ Սուրբ Երրորդութեանն՝ Հաւր, եւ Որդւոյ, եւ Սուրբ Հոգւոյն: Եւ մեղայ Սուրբ Աստուածածնին, եւ Սուրբ առաքելոցն, եւ ամենայն սրբոց, մեղայ Սրբոց հրեշտակացն եւ հրեշտակապետացն

1 Բնագրում՝ սահմանել:
2 Բնագրում՝ ղեղացն:

եւ ամենայն երկնային զաւրացն: Մեղայ այն հրեշտակին, որ պահէ զիս ի մանկութենէ իմմէ մինչեւ ցայժմ: /181բ/ Մեղայ եւ առաջի սրբութեանդ Քո, Սո՛ւրբ Հայր, տեսուլ հոգւոյ իմոյ»: Եւ ապա տացէ համարձակութիւն ասել, զոր ինչ գործեալ իցէ՝ յորդորելով, թէ մի՛ ամաչեր, զի ես մարդ եմ ընդ մեղաւք անկեալ, եւ թէ, զոր ասա ամաչես եւ յինէն թագուցանես, յահեղ հրապարակն առաջի երկնաւորացն եւ երկրաւորաց զգլուխտ բանաս ու կանչես լալով եւ չգտանես թողութիւն: Վասն որոյ ասա՛ իմ առաջ ի միայնոյ, եւ ես դիւրաւ առնեմ թողութիւն: Եւ ապա փոքր մի ներումն պարտ է տալ, զի ինքն յինքենէ շարժեսցի եւ ասէ որչափ կարէ: Եւ դարձեալ կրկնեալ ասէ, թէ այլ ասա՛ եւ երիցս եւ չորիցս միջոց տալ եւ հետ նեղել, թէ ասա՝. մի՛ վախեր, մի՛ ամաչեր, չդնե՛մ ծանր լուծ: Դիւրաւ առնեմ թողութիւն, լո՛ւր միայն, ասա՝, մի՛ պահեր յինէն: Եւ յորժամ դադարէ ասելով, թէ այլ ոչ ինչ գիտեմ, ապա քննել պարտ է, թէ զայս ինչ եւ զայս գործեալ իցես, որ մոռացեալ իցէ, ի վերայ հասցէ եւ թէ վախէ /182ա/ կամ ամաչէ, համարձակութիւն առցէ ի հարցմանէն եւ ասէ՝ այո՝:

Եւ որպէս ասացաք, զգուշութեամբ հարցէ եւ մի՛ առանց ընտրողութեան, զի մի՛ գայթակղեսցի, զի թէ ողջախոհ մարդ լիցի եւ անտեղեակ այլ անզգայ մեղաց: Ի հարցանելն զայսոսիկ ամբոխի, եւ միտքն ի պատերազմ անկանի եւ ասէ, թէ այսպիսի մեղք այլ կու գործի, եւ յայնմհետէ կա՛մ փափագէ գործել եւ կա՛մ հպարտանայ, թէ իմս թեթեւ է եւ անզեղջ մնայ: Վասն որոյ յիւր բանքն ի յար զինք պարտ է հարցանել:

Եւ վասն ժամանակին պարտ է քննել, թէ զմեղքն յի՞նչ ժամ գործեաց՝ յերիտասարդութեա՞ն, ի ծերութեա՞ն, իւր կամա՞ւ, թէ՞ այլք նեղեցին: Ի պահո՞ց ժամ, թէ ՞ յուտէից, յանկարծակի՞ պատահմամբ եղեւ, թէ՞ ի վաղ ժամանակէ խորհէր գործել, ի՞նքն գնաց առ ընկերն, թէ՞ նա եկն, ի մեղացն ի գործե՞լն հեշտացաւ, թէ՞ խղճմտանաւք գործեաց, յետոյ զղջացաւ, թէ՞ ուրախ եկաց, մէ՞կ հետ եղաւ, թէ՞ այլ, հետ մի մարդոյ, /182բ/ թէ՞ հետ բազում, իմացա՞ն այլք զիւրեանց գործն, թէ՞ ոչ, եւ վասն իշոցաց, թէ ինչ ազգ էր: Զա՞յր մարդ անարգեաց, թէ՞ զկին, զբերան, թէ զպատկեր, թէ զմեռեալք, թէ զկենդանիք, զոր սարսափելին է, զհրեշտակաց, զպաշտելիք, զհաւատ եւ զգուշացնել պիտի, թէ իշոցքն ուրացութիւն է եւ հերձուածութիւն եւ ընդ նզովիւք է:

Եւ վասն գողութեան թէ մե՞ծ իրք էր, փո՞քր էր, ի կարի՞ք էր, թէ՞ անկարիք: Թէ տէրն կենդանի է, յետ պարտ է տալ, թէ ոչ՝ յազգական իւր, թէ ոչ ազգ չկենայ, ապա աղքատաց տայ, թէ չունի իրք, որ վճարէ, ապաշխարէ որչափ կարէ:

Բազում ինչ պարտ էր գրել վասն այսորիկ, այլ յամբոխեալ մտաց եւ տարակոյս ժամու: Եւ այս բաւական է: